«Ընկ. Ղուկաս Ղուկասեանի և նրա մօտիկ ընկերներ Արմենակ Բուդաղեանի և Աղասի Խանջեանի միջոցով, գրում է նա, մենք Երևանում կատարում էինք կոնսպիրատիւ (գաղտնի) մեր բոլոր գործերը: Թռուցիկներ տպել և կպցնել պատերին, գրականութիւն փոխադրել, ժողովատեղի գտնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային Կոմիտէ և այլն — այս բոլորը նրանք կատարում էին արագ, ճիշտ, կոնսպիրացիայի բոլոր օրէնքներով»:

Նոյն Ղ. Ղուկասեանը «1919թ. օգոստոսի վերջերին յատուկ յանձնարարութեամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ՝ տեղական կազմակերպութիւններին յայտնելու Երևանում գումարուելիք կուսխորհրդակցութեան, նրա օրակարգի և կազմակերպման հետ կապած հարցերի մասին»:*)

Բոլշևիկները առանձնապէս ուժեղ էին Ալեքսանդրապոլում: Այստեղի նրանց կոմիտէն մեծ գումարներ էր ստանում Թիֆլիսից ու Ռուսաստանից, գաղտնի թերթ էր հրատարակում և քարոզիչներ ու կազմակերպիչներ ուղարկում երկրի դանդաղ կողմերը: Հայաստանի և Վրաստանի միջև գտնուող չէզոք գօտին յենակէտ էր բոլշևիկների համար, որտեղից նրանք, գաղտնի ճանապարհներով, մարդ, դրամ և գրականութիւն էին ներմուծում Հայաստան: 1920 թուականի սկզբներին Հայաստանը արդէն թատերաբեմ էր բոլշևիկեան գործօն պրոպագանդի և կազմակերպութեան:

Կառավարութիւնը տեղեակ էր բոլշևիկների գործունէութեան, բայց դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնելու: Ներքին գործոց նախարարութիւնը մօտից հետևում էր նրանց գաղտնի շարժումներին ու պարագլուխների քայլերին, ծանօթ էր նրանց ծրագիրներին և բանակի ու բանուորութեան մէջ մղած հակակառավարական պրոպագանդին: Հայաստանի քաղաքական հետախուզութեան և պահեստի միլիցիայի գլուխը կանգնած էր Լևոն Քալանթարեանի պէս մի հմուտ ու եռանդուն գործիչ, որի տեսողութիւնից խուսափելը շատ էլ հեշտ չէր: Բայց կառավարութիւնը դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնել. հոգեբանօրէն պատրաստ չէր «մեզ պէս ընկերվարական կոմունիստներին», «մեր երէկուայ ընկերներին» ձերբակալելու: Կար և Վրաստանի օրինակը. դեռ երէկ Հայաստանի հասարակաց կարծիքը այնպէս խիստ դատապարտում էր վրաց մենշևիկների գործադրած դաժան միջոցները բոլշևիկների դէմ — հիմա ի՞նչպէս անել նոյնը մեզ մօտ:

Սակայն, թէ Դաշնակցութեան մէջ և թէ չէզոք շրջաններում կար և հակառակ վերաբերում. ամէն կողմից մատնանշւում էր այն վտանգը, որ բոլշևիկները կարող են հասցնել Հայաստանին: Այս տրամադրութեան և եղած պահանջների հետևանքով, ներքին գործոց նախարարութիւնը, յունւ. 31-ին Երևանում և Դիլիջանում ձերբակալեց մի քանի կոմունիստներ:

Այս փաստը բոլշևիկներն ընդունեցին իբրև մարտահրաւէր: Մի քանի օր անցած, սոցիալ-դեմոկրատ գործիչ Արշակ Զոհրաբեանի յուղարկաւորութեան առթիւ, նրանք կազմակերպեցին ազմիտ մի ցոյց, որի նպատակն

*) «Խորհրդ. Հայաստան», 14 մայիս, 1927.